Պարույր Սևակ

Մոսկվացին

-«Սովորական բան է, մանրուք է սա»,- արագ
Պիտի ասի իսկույն
Նա, ով գեթ մի օրով այս քաղաքն է մտել:
Այո՛, մանրուք է սա,
Սովորակա՞ն այնքան և հասարա՛կ,
Որ կարող ես անգամ չնկատել:
Այսպես՝
շտապում ես և կամ ման ես գալիս
(Անկարևոր է սա, երկրորդական):
Եվ դու թուխ ես, ինչպես մի հնդկական Վալի,
Եվ աչքերդ շեղ են՝ կիրգիզական:
Եվ աչքերդ սև են - սև խաղողի հատիկ,
Բերանդ է ընդգծված՝ ինչպես արաբ,
Քիթըդ ուղիղ, ասես ֆրագմենտ է անտիկ,
Եվ դու ման ես գալիս քո ժամերին պարապ:
Հանկարծ դեմից, կողքից,
Միշտ «ներեցեք» խոսքով,
Մեկը դիմում է քեզ
և դու կանգ ես առնում:
Նա շեկ մազեր ունի,
ասես զօծված ոսկով,

Աչքեր՝ կապո՛ւյտ-կապո՛ւյտ,
Բիլ երկինքն է կարծես այնտեղ անդրադառնում:
-«Խնդրեմ ասեք, ընկեր,
Ո՞նց կարող եմ ընկնել»...
Եվ նա տալիս է քեզ մի փողոցի անուն,
Ասենք Նիկիտսկու և կամ Կոլորովի:
Եվ հարցնողի մտքով գեթ մի վայրկյան
Չի էլ անցնում անգամ,
Որ դու մոսկովցի չես:
Բոլորովի՛ն:
Ռուս է ոտից-գլուխ,
Գուցե և մոսկովցի,
Ռուս է Ռյազանից,
Դոնից
կամ Վոլգայից,
Եվ կանգնեցնում է նա, հարցնում է - հասկացի՛ր -
Մոլդավացուց,
օսից,
չուկոտացուց,
հայից:
Եվ չի անցնում մտքով
Ոչ մի վայրկյան անգամ,
Որ ում դիմել է նա
Թե նման չէ ռուսի,
ուրեմն մոսկովցի չէ:
Սա մանրուք է, անշուշտ, սովորակա՛ն այնքան,
Որ պոետի մտքով չի էլ անցնի անգամ
Նստել ու երգ գրել...
Երգ չի սա է՛լ, օ չէ՛:
Սա հենց այն է, ինչով Մոսկվան Մոսկվա մնում,

Ինչով նա հաղթում է և ինչով նա հիմա
Ազնիվ մարդկանց սրտում,
երկրագնդում համայն
Այն անխորտակ,
անտակ,
խոր հավատն է ծնել,
Որ գալիք է Մոսկվան ողջ աշխարհի համար
Եվ իսկական բոլոր ազնիվ մարդիկ այնտեղ՝
Վաղվա մոսկովցիներ...

25.I.1952թ.
Մոսկվա